ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Պ. ԱՌԱՔԵԼ, ԾԱՏՈՒՐԵԱՆ, որպէս հաղորդում է «Տարազ»-ը, մտադրութիւն ունի մի գիւղատնտեսական ուսումնարան հիմնելու Զանգեզուր գաւառում (Գանձակի նահանգ, Շուշայ գաւառի հարեան) և որ այդ մասին ծրագիրը արդէն իսկ կազմել է աջակցութեամբ մասնագէտների։ «Մուրճ»-ը միշտ մի առանձին ջերմ վերաբերմունք է ունեցել դէպի գիւղական ժողովրդի խնդիրները և շահերը. իսկ գիւղատնտես ինտելիգենցիայի կազմութիւնը այս ամսագրի արծարծած և փայփայած մտքերից մէկն է։ Այդ ինտելիգենցիան մենք սպասում ենք գլխաւորապէս մեր երկրում գոյութիւն ունեցող և դեռ հիմնելիք գիւղատնտեսական տարրին և միջին ուսումնարաններից։ Եթէ տողդ է հաղորդած լուրը և եթէ պ. Ծատուրեանը իրագործի այդ մտադրութիւնը, Կովկասեան հայերիս մէջ նա կը լինի առաջին օրինակ աւողը այդ շաւղում և վրացի պ. Ծինամզուարովից յետոյ՝ նա կը լինի երկրորդը Կովկասում մասնաւոր գիւղատնտեսական գպրոց հիմնողը։

† ՏԷՆ (Taine), Հիպոլիտ, ժամանակիս ամենանշանաւոր կրիտիկոսը վախճանուեց 21 փետրու. (նոր տոմարով մարտի 5)։

«ՄԱՍԻՍ» թերթը (Կ. Պոլսի), որ հրատարակւում էր 3 շաբաթը մի անգամ, այժմ, լուսաբերից, հրատարակւում է շաբաթը մի անգամ, դառնալով շաբաթաթերթ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ համար ընտրութիւններ։ Մեր ընթերցողներին լաւանի է, որ օրէնքով 11 յունիսի 1892 թ. քաղաքային ինքնավարութեան պոլոժենիէ՝ն ենթարկուեց կարեւոր փոփոխութիւնների։ Քաղաքային ինքնավարութեան այդ նոր պոլոժենիէ՝ն կը սկսի գործադրել ներկայ 1893 թուականից։ Այդ պատճառով այժմեան խորհրդարանը (դումա) կը լուծի շուտով և կը կատարուին ընտրութիւններ նոր օրէնքի համաձայն։ Նոր օրէնքով զգալի կերպով սահմանափակւում է ընտ-

ղողների թիւը. կը մասնակցեն միայն նոքա, ովքեր քաղաքում կալւածք ունեն 1500 ռ. աւելի արժողութեամբ և կամ ովքեր 1-ն կամ 2-դ կարգի գիլդիական վկայականներ ունեն։ Փետրուարին քաղաքային վարչութիւնը վերջացրեց ընտրողների ցուցակ կազմելը, որ և տրուեց տպագրութեան։ Այդ ցուցակում մտցրած են 2,412 հոգի, որոնցից 250 հոգի իբր գիլդիականներ, մնացածը՝ իբր տնատէրեր։ Առաջուց օրէնքի համաձայն՝ ընտրողների թիւը մօտ 5000 էր, այժմ ուրեմն նախկինի կէսն է։

Ցուցակը բաժանուած է երեք մասի՝ 1) Ցուցակ այն անձերի, որոնք միայն իրանք ունեն անշարժ կալւածք, տնահարկի համար գնահատուած են 1500 ռուբլուց ոչ պակաս. այդ նոյն ցանկում լիշուած են նաև այն անձերը և հիմնարկութիւնները, որոնք առևտրական ցեղ ունեն։ 2) Ցուցակ այն անշարժ կալւածների, որոնք մի քանի անձերի անբաժան սեպհականութիւն են կազմում։ 3) Հրէաներ, որոնք կարող են ձայնաւոր ընտրուել։ Առաջ ընտրողները բաժանուած էին երեք կարգի, համաձայն տուած տուրքի մեծութեան. առաջին կարգին պատկանում էին սակաւաթիւ մարդիկ, երկրորդ կարգին աւելի բազմաթիւ, երրորդ կարգին՝ ամենամեծ մասը ընտրողների. և ամեն մի կարգ ընտրում էր 24-ական ձայնաւոր։ Այժմ ընտրողները այլ ևս կարգերի չեն բաժանուելու, այլ լինելու է ընդհանուր ընտրութիւն։ Նախկին առաջին կարգի ընտրողներից նոր կազմուած ցուցակներում մտցրած են ընդամենը 71 հոգի, նախկին երկրորդ կարգից՝ 381 հոգի։ Նոր պալաժենիէլով, ուրեմն, ընտրութիւնների ժամանակ, գլխաւոր ազդեցութիւնը դրուած է միջակ կարողութեան տէր անձերին։

«ԱՂԲԻՒՐ» մանկական ամսագրի ներկայ տարեկ № 1-ից երևում է, որ այդ ամսագրի ներկայ խմբագրութիւնը լաւ հասկանում է այդ թերթի իսկական կոչումը՝ լինել մանկական ամսագիր։ Դատելով մեզ ծանօթ երեխաների ստացած տպաւորութիւնից՝ տպուած լօդուածները թէ լեզուի և թէ նիւթի կողմից մատչելի են և գրաւիչ, մասամբ 7—10, մասամբ 10—13 տարեկան երեխաների համար։

ՀԱՑՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԵՍՏԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ։ Բարձրագոյն հրամանով լայտարարուած է հետևեալը։ Պետական խորհուրդը՝ քաղաքացիական և հոգևոր գործերի օրէնքների միացեալ դեպարտամենտներում և ընդհանուր ժողովում, քննե-

լով պատերազմական մինիստրի առաջադրութիւնը՝ Անդրկասպեան և Թուրքեստան երկիրներում հայոց եկեղեցական-ծխական դպրոցների բացման կարգի վերաբերեալ,—կարծիք յայտնեց՝ լրացնել 995-րդ յօդ. օտար դաւանութեան օրէնքի հատ. XI, մասն I օրէնքների համագումարի, հրատ. 1857, հետեւեալ ծանօթութիւնով.

«Այս յօդուածի մէջ նշանակուած դպրոցները բացւում են Թուրքեստան երկրում և Անդրկասպեան երկրի կառավարչի համաձայնութեամբ։—Այդ դպրոցներում բոլոր առարկաները, բացի կրօնից, աւանդւում են ռուսաց լեզուով»։

Նորին Կայսերական Մեծութիւնը պետական խորհրդի առաջադրած կարծիքը դեկտ. 1-ին 1892 թ. բարեհաճեց հաստատել և հրամայեց գործադրել։

ԲԱՌԻՒ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ *ստացանք նորա տարեկան հաշիւը 1892 թ. համար։ Հաշուից երևում է հետեւեալը։*

Մուտք եղել է՝

Մայր գումար	54.515 ռ.	95 կ.
Դարձուածական գումար	7.554 »	03 »
Դրաղարանական գումարներ . . .	2.687 »	59 »
Ռոստոմեանցի կիսարձանի գումար.	171 »	04 »
Որդեգրական գումարներ	4.655 »	51 »
Օժիտի գումարներ	1.294 »	66 »
Պահեստի գումարներ	21.125 »	64 »
Ուսումնարանի նորակառոյց շինութեան համար.	14.500 »	— »

Ծախք եղել է՝

Մայր գումար մնում է	54.515 »	95 »
Դարձուածական գումարներից մնացած է	6.560 »	08 »
Դրաղարանի համար.	1.077 »	60 »
Որդեգիրներին.	135 »	— »
Օժիտների գումարներից.	0 »	— »
Պահեստի գումարներից	2.200 »	— »
Ուսումնարանների նոր շինութեան	12.500 »	— »
Հին շինութեան նորոգութեան համար	2.000 »	— »

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ, *որի մասին անցեալ ամիս հաղորդել էինք, բացւեց փետրուարի 21-ին և փակւեց 28-ին։ Ժո-*

զովը գոմարեալ էր լատկապէս խոլերայի կրկնելու դէպքում գործադրելի միջոցների մասին խորհելու համար։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ պ. Գ. Վանցեանի մի նամակից քաղում ենք այս կտորը «Մուրճ»-ի մասին։ «Մուրճ»-ը կարդալու և հասկանալու համար հարկաւոր է մի որոշ աստիճանի կրթութիւն և զարգացումն ունենալ, որից ըստ մեծի մասին զուրկ է մեր անտեսապէս ապահով դասակարգը. այդ պատճառով էլ «Մուրճ»-ը նոցա մէջ դժուար է տարածւում, որոնք իրանց ամբողջ մտաւոր պաշարը լրագրական թեթև լուրերով են միայն հարստացնում։

Սակայն, ըստ իս, «Մուրճ»-ի ապագան լիովին ապահով պէտք է համարել, քանի որ նորա կողմն են մեր բոլոր հասկացող և բանիբուն երիտասարդները, որոնց լոյսն ու հաւատը օրաւուր աւելանում է «Մուրճ»-ի վերաբերութեամբ։

ՓՈԽԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՒՇԻՈՒՄ։—Շուշի քաղաքից պ. Ա. Բաբախանեան մեզ գրում է. «Այստեղ ես տեղեկութիւններ հաւաքեցի և իմացայ, որ (1886 թ.) ծրագրած քաղաքային փոխատու ընկերութեան կանոնադրութիւնը վաղուց հաստատուած է կառավարութեան կողմից և բացումը թոյլատրուած։ Ինձ չը կարողացան հաստատապէս բացատրել թէ ով է պատճառը, որ այսքան ժամանակ այդ օգտակար հիմնարկութիւնը մնաց թուղթ է մնացել։ «Նախաձեռնող չը կայ», ասում են մեր քաղաքի նոյն իսկ ինտելիգէնտ ներկայացուցիչները. և այդ տեղի է ունենում մեր քաղաքի պէս մի մեծ կենտրոնում։ Նզրակացութիւնները Ձեզ եմ թողնում, բայց չեմ կարող, իբրև մի շատ տխուր ֆակտ չասել, որ այստեղ էլ հաստատւում է այն, որ նախաձեռնութիւն ստանձնել կարողների (հարուստների) շահերին ընդդէմ է այդ հիմնարկութիւնը, որը գոնէ մասամբ պիտի վերացնէ վաշխառուների տոկոսային քաջագործութիւնները. այդ պատճառով նրանք մեռցրել են էժան վարկի հնարաւորութիւնը, որպէս զի ժողովրդի ստորին խաւերը միշտ հարստահարուած մնալով, չը սպառեն այն աղբիւրները, որոնք նրանց հարստութիւն են բերում։

Կառավարութեան կողմից մինչև այժմ ծանուցում չի եղած թէ այդ հիմնարկութիւնը փակուած է համարւում. և այստեղ ամենքն են կարծում որ այժմ էլ դեռ ուշ չէ օգտուել արդէն եղած հաստատութիւնից»։

ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ, որ լատաձգուեց անցեալ ամիս, տեղի ունեցաւ փետրու. 28-ին, հրաւէրքով եկե-

դեցու երեսփոխ պ. Ա. Վարդապետեանի և նախագահութեամբ կոնսիստորիալից նշանակուած քահանայի։ Ժողովը լսեց պ. երեցփոխի հաշիւը 1892 թ. համար և վճռեց նորա հաստատումը թողնել, մինչև որ անցեալ տարի ընտրուած հաշուառեանները կը քննեն այն։ Կարդացուած հաշուից երևաց, որ 1892 թ. եկեղեցին ունեցել է մայր գումար 4703 ռուբլի, որից ստացել է տոկոս 275 ռուբ.։ Եկեղեցու ամբողջ մուտքը եղել է 2444 ռ. 38 կոպ., որից մնացել է 2314 ռուբլի։ Եկամտի ամենախոշոր մասը կազմել է մոմագինը (1036 ռ.)։ Ապա պ. Վարդապետեանը լայնեց իւր դիտաւորութիւնը ներքին և արտաքին բարեկարգութիւն մտցնել իւր կառավարութեանը յանձնուած եկեղեցու մէջ, որի համար հարկաւոր է եկեղեցու բիւջէն հասցնել 3703 ռուբլու, այսինքն մուտքը աւելացնել մինչ 1300 ռուբլի գումարով։ Ժողովականները ոչ մի վճիռ չը կայացրին նոր ծախքերի վերաբերեալ առաջարկութիւնների մասին, բայց համաձայնեցին պ. երեցփոխի հետ, որ մի այլ անգամ նա ներկայացնի ժողովին մի մանրամասն ծրագիր մուտքը աւելացնելու նոր աղբիւրների և առհասարակ բարեկարգութիւնների մասին։ Այդ ծրագիրը մշակելու համար պ. երեցփոխը առաջարկեց որ ժողովը ընտրի մարդիկ, իբր իւր օգնականներ և խորհրդատուներ և ինքը առաջարկեց դորա համար չարմար մարդկանց անուններ։ Ժողովը սակայն չէր կարող այդպիսի մի խորհրդատու մարմին ընտրել, հետևապէս մնաց, որ պ. երեցփոխը կազմէ ապագայ ժողովին առաջարկելիք ծրագիրը այն անձերի մասնակցութեամբ, որոնց նա ինքը դիմելու հարկ կը դտնի։

ՊՐ. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆՑԻ աշխատութիւնները հրատարակելու մտադրութեան համար, որի մասին հաղորդել էինք «Մուրճ»-ի 1892 թ. № 12, Ալեքսանդրապոլից ստացել ենք մի վերին աստիճանի համակրական նամակ, որով ստորագրողները ցանկութիւն են յայտնում, որ մասնաժողովը չտապէր տեղեկութիւն տալ, որպէս զի երանք ևս մասնակցեն իրանց լումայով։ Ստորագրել են՝ պպ. Յակոբ Խաչվանքեան, Վաղարշակ Գասպարեան, Սմբատ Վիրապեան, Գէորգ Միքայէլեան, Աւետիք Մալալեան, օր. Ե. Արաբաջեան, տիկին Հեղինէ Յովհաննէսեան, Արշակ Բրտեան, Յարութիւն Արաբաջեան, Մուշեղ Մամիկոնեան։

ԲՈՒԽԱՐԱՑԻ ԷՄԻՐԸ Միր Սէյիդ-Աբդուլ Ախադ-խան իւր մինիստրներով և բարձր աստիճաններով անցեալ 1892 թ. դեկտեմբերի վեր-

ջին, մի քանի օր մնալով Թիֆլիս, ուղևորուեց Պետերբուրգ, իբր հիւր թագաւոր կայսեր։ Նա թողեց Պետերբուրգում իւր մեծ որդուն՝ Բուխարիայի գահաժառանգին այնտեղ ուսանելու զինուորական դպրոցում։ Վերադարձին փետրուարի 11-ից մինչ 17 մնաց Թիֆլիսում և Բաքի վրայով ուղևորուեց իւր երկիրը։

ԷԼԳՈՒՋԱ, վէպ Ալ. Մոչխուբարձէի (Կազբէգ), թարգմանութ. պ. Մկրտիչ Նաւասարդեանի, որը անցեալ դեկտեմբերին 1892 թ. խոստացած էր «Մուրճ»-ի մէջ տպելու համար, կը սկսի տպել երբ Սենկևիչի «Առանց Դաւանանքին» կը վերջանայ։

«ԱՐԱՐԱՏ» ամսագրի սոյն տարեալ № 1-ից (տես Գրախօսութիւն) երևում է, որ նորա խմբագրութիւնը տեղեկութիւն չունի այն որոշման մասին, որ արուեց Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովում 12 մայիսի 1892 թ., հետևեալ բովանդակութեամբ. «Պարտաւորական է Ընկերութեան բոլոր հրատարակութիւններից երկու-երկու օրինակ ուղարկել Էջմիածնի Մայր-Դրադարանին և Գէորգեան Ճեմարանի մատենադարանին» (Տեսնել «Մուրճ» 1892 թ. № 5, էջ 848)։

ՎՐԻՊԱԿ «Մուրճ»-ի ներկայ 2-րդ համարում «Արսէն Դիմաքսեան» վէպի մէջ, այն է 231-րդ էջում սպրդել է մի տպագրական սխալ։

21-րդ տողից ոչոնց տոնոնց է.	Պէտք է կարդալ.
—Շատ ուրախ եմ. նա ինչ մանկավարժ է, որ վաշխառութիւնով է պարապում,—հարցրեց Դիմաքսեանը զարմացած։	—Շատ ուրախ եմ. նա ինչ մանկավարժ է, որ վաշխառութիւնով է պարապում։
—Համքարեանը, մինթէ։	—Համքարեանը, մինթէ,—հարցրեց Դիմաքսեանը զարմացած։

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 1.

Պր. Շիրվանզադէի Արսէն Դիմաքսեան վէպում՝

	տոնոնէ	ուղիղն է
էջ 53, տող 1 վերևից	Նա ուրախ էր,	Նա տխուր էր

Պր. Բալաղեանի ջուլածում՝

էջ 123 տող 2 ներք.	մինչև	մինչև անգամ
էջ 129 տող 3 վեր.	հաւանենք	հաւաքենք

Պր. Անագչեանի ջուլածում

էջ 114 տող 17 վերևից՝	արևմտեան	արևմտեան և արևելեան

Արտասահմանեան քրոնիկում

էջ 170 տող և ներքևից՝	այն կողմը	այն որմը

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ

1) NORAYR DE BYZANCE, Néandre.—De l'urgencee d'une édition critique des textes arméniens. Nota.—Reale Accademia dei Lincei. Estratto dai Rendiconti.—Seduta del 18 dicembre 1892.—Roma, tipografia della R. Accademia dei Lincei, 1892. (Նորայր Բիւզանդացի.—Հայոց բնագիրների մի քննադատական հրատարակութեան անհրաժեշտութեան մասին.

2) ՓԵՐԻԱՆՕՂԼՈՒ, Ի., թարգմանութեամբ Կոստ. Մարտիրոսեանցի.—«Անդրանիկ Նոմեէն», (պատմական վէպ). Թիֆլիս, տպարան Ց. Մարտիրոսեանցի, 1893 թ., գինն է 50 կոպէկ.

3) ԱՍՐԱՆԱՋ—ՓԱՄԲԱԿԵՑԻ.—«Դաղափարական օրիորդ» (վէպ) մասն Ա. Թիֆլիս, տպ. Նազարեանի, 1893 թ., գինն է 10 կոպէկ.

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ